



Holy Trinity Armenian Church

14 Woodlawn Avenue West, Toronto 7, Ontario - 923-0081

Jirayr Tashjian Pastor

Փետրուար 1, 1973
Թորոնթօ, Գանատա

Գերաշնորհ
Տ.Թորգոմ Ս.Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ Գանատայի
նիւ Եորը,

Սրբազան Հայր,

Ս.Երրորդութիւն Հայց.Եկեղեցւոյ Տարեկան ծխական ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, Յունուար 28, 1973 կէսօրէն ետք ժամը 4.00ին մեր նախագահութեամբ եւ ատենապետութեամբ Բարեշնորհ Վարդան Սրկ. Վարդանեանի:

Ծխական ժողովին իրենց ներկայութիւնը բերած էին աւելի քան 99 Տրատու անդամներ, որոնք ժողովիս օրինաւոր նիստին հաստատեցին ծխական խորհուրդիս եւ եկեղեցապատկան մարմիններու նիւթա-բարոյական տեղեկատուութիւնները եւ վաբերացուցին եկեղեցւոյս 1973 տարւոյ ելեւմտական հաշուեկշիռը:

Ծխական Տարեկան ժողովը կատարեց նաեւ ծխական խորհուրդիս մասնակի ընտրութիւնը 96 Տրատու անդամներու մասնակցութեամբ: Քուէներու առաւելագոյն կարգով ներկայացնելով, խոնարհաբար կը խնդրենք Ձերդ Սրբազնութեան վաւերացումը, հետեւեալ ընտրեալ ազգայինները Ձեր միջոցաւ հրաւիրելու ծխական խորհուրդիս պաշտօնավարութեան.-

Տիարք՝	Պարզեւ Խոնամեան	93	Քուէ
	Ժան Գալայճեան	86	,,
	Լեւոն Եազըմեան	79	,,
	Ժիրայր Փախագեան	75	,,
	Անդրանիկ Թահմիզեան	43	,,

Յաջորդ առաւելագոյն քուէն ստացաւ Ղեւոնդ Խոսրովեան 42 քուէ:

Համեցէք ներփակ գտնել մեր Տարեկան Ձեկոյցը, ծխական խորհուրդի եւ եկեղեցապատկան մարմիններու լրիւ տեղեկատուութիւնները, Ազգային Առաջնորդարանի Հարցարանը ինչպէս նաեւ Հոգեւոր Հովիւի ընտրութեան արդիւնքը:

Մնամք հաւատարմական լաւագոյն սիրով եւ մաղթելով նորանոր նուաճումներ Տիրախնամ Թեմիդ Ազգային-Եկեղեցական կեանքին մատչիմ ի համբոյր Ձեր Ս.Աջոյն որդիական անկեղծ սիրով

Խոնարհ որդիդ՝

Աղօթակից

Jirayr Tashjian
Ժիրայր Վր. Թաշճեան

Հոգ. Հովիւ Ս.Երրորդութիւն Հայց.Եկեղեցւոյ

